բադարձավ այդ շրջագծում տեղի ունեցած Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ Զաքքա Ա Պատրիարքի եւ Սիրայի գլխավոր Մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ - Դին Հասսունի այցերին Մայր Աթոռ:

Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահն իր խոսքում անդրադարձավ Սիրիայի ժողովուրդների եւ կրոնների բազմազանությանը եւ Սիրիայի կյանքում հայ ժողովրդի զավակների կարեւոր ներդրմանը: Ընդգծվեց կրոնների կարեւոր առաքելությունը մարդկանց կյանքում: Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահը հրավիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին Սիրիայի Հանրապետություն:

Ի գնահատություն հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու հանդեպ Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահի, պետության եւ ժողովրդի հոգատար եւ ազնիվ վերաբերմունքի, ինչպես նաեւ ի խնդիր խաղաղության եւ ժողովուրդների բարեկամության կատարած իր աշխատանքի՝ Գարեգին Բ Հայրապետը նախագահ Բաշար Ալ Ասադին հանձնեց Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, ինչպես նաեւ Սիրիայից հավատավոր բարերար հայորդիներ՝ տիարք Գառնիկ Ցակուբյանը, թեմական խորհրդի ատենապետ Թագվոր Բոյաջյանը, Վազգեն Ցակուբյանը եւ Գաբրիել Ջամբարջին:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱԼԻՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Հունիսի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Ռուսաստանի Դաշնության Կալինինգրադի մարզի նահանգապետ Գեորգի Բոոսի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց առավել ամրապնդվող եւ զարգացող երկկողմ հարաբերությունների, համագործակցության եւ երկու ժողովուրդների միջեւ բարի ավանդույթների պահպանման ու զորացման առիթով՝ կարեւոր համարելով տարբեր ոլորտների գործիչների փոխայցելությունները: Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց նահանգապետին հայ համայնքի նկատմամբ մարզային իշխանությունների ուշադիր եւ հոգատար վերաբերմունքի համար:

Իր հերթին պրն. Բոոսը, ուրախություն հայտնելով հերթական հանդիպման համար, ներկայացրեց այցի մանրամասները եւ արձանագրված արդյունքները, ինչպես նաեւ անդրադարձավ Կալինինգրադի մարզում հայ ժողովրդի զավակների աշխույժ համայնքային կյանքին եւ կարեւոր ներդրմանը մարզի կյանքի տարբեր ոլորտներում:

կաթողիկոսարան մուտքի վիճակագրության գլխավոր քարտուղար Գ. Բասոյի և Կոստանդին Գ. Բասոյի